

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 73

Ք. Երևան

« 04 » Հոկտեմբերի 2021 թ.

Մի կողմից «Մանիլ» ՍՊԸ-ն /հետագայում կատարող/, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս նրա տնօրեն՝ Մ.Մալխասյանի, մյուս կողմից «ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ /հետագայում պատվիրատու/, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս նրա տնօրեն՝ Վ.Պետրոսյանի կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի նպատակը

Կատարողի կողմից ընդգրկված ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ 50/12 հասցեի թվով 2 վերելակների (մոսկովյան արտադրության) տեխ. սպասարկման և անխափան շահագործման ապահովումը:

2. Կողմերի պարտականությունները

- 2.1 Ապահովել եռաֆազ հոսանքի անխափան սնուցումը մինչև մեքենայական սրահի գլխավոր անջատիչը:
- 2.2 Առանց կատարողի հետ համաձայնեցնելու, սեփական նախաձեռնությամբ, չմիջամտել և չկատարել վերելակների հետ առնչվող որևէ տեսակի աշխատանքներ:
- 2.3 Ապահովել վերելակների փորձաքննության իրականացումը սահմանված կարգով:
- 2.4 Վերելակների խափանման դեպքում կատարողին այդ մասին տեղյակ պահել /ներկայացնել հայտ/:

3. Կատարողի պարտավորությունները

- 3.1 Ապահովել վերելակների անխափան շահագործումը:
- 3.2 Իրականացնել վերելակների տեխ. սպասարկումը ըստ կանոնակարգի:
- 3.3 Վերելակների նորոգման աշխատանքի կատարմանը ձեռնամուխ լինել պատվիրատուից այդ մասին հայտի ստացման հիման վրա:
- 3.4 Հերթապահների կողմից վերելակի խցիկից մարդկանց հանման աշխատանքի կատարմանը ձեռնամուխ լինել պատվիրատուից այդ մասին հայտի ստացման պահից:
- 3.5 Սպասարկման պրոֆիլակտիկ և նորոգման աշխատանքները իրականացնել ժամը 9:00-մինչև 18:00-ն: Հանգստյան օրերը շաբաթ, կիրակի:
- 3.6 Իրականացնել վերելակների տեխ. սպասարկումը որակավորված էլ. մեխանիկներով:

4. Վճարման կարգը

- 4.1 Վերելակների տեխ. սպասարկման ամսավճարը կազմում է՝
45000 (քառասունհինգ հազար) դրամ, ներառյալ հարկերը
- 4.2 Սպասարկման ամսական վարձի վճարումը կատարել մինչև հաջորդ ամսվա 10-ը:

5. Հատուկ պայմաններ

- 5.1 Վերելակների վերանորոգումը իրականացվում է պատվիրատուի միջոցներով:

